ՍԱՐԳԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱԲԴԱԼԼԱՀ ԱԶԶԱՄԻ «ՋԻՀԱԴԻ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ

2010 թ. վերջից մուսուլմանական երկրներում ծայր առած և ներկայումս շարունակվող գործընթացներում նկատելի են իսլամական արմատական և ծայրահեղ արմատական տրամադրությունների ավելացում: Այդ համատեքստում իսլամականների համար ջիհադական պայքար մղելու և ընդհանրապես ջիհադի հայեցակարգային կիրարկումների լայն հնարավորություններ ստեղծվեցին, որոնք առարկայական դրսևորումներ են գտնում մուսուլմանական երկրներում ընթացող արդի հակամարտություններում:

Ջիհադի հայեցակարգային նոր դրսևորումների հիմքը դրվեց XX դարի վերջին Աբդալլահ Ազզամի կողմից: Վերջինիս գաղափարների անմիջական ազդեցությունն են կրում աշխարհի տարբեր երկրներում բնակվող մուսուլմանների ակտիվությունը ներկայիս ջիհադական պայքարում, Մերձավորարևելյան, Հյուսիսաֆրիկյան և այլ տարածաշրջաններում ընթացող հակամարտություններում իսլամականների թվաքանակի ավելացումն ու 2014 թ. հունիսի 29-ից Սիրիայի և Իրաքի որոշ հատվածներում «Իսլամական պետության» հիմնումը:

Ջիհադի հայեցակարգի նոր դրսևորումները. Աբդալլահ Ազզամի գործունեությունը

1979 թ. դեկտեմբերին խորհրդային բանակի ստորաբաժանումները մտան Աֆղանստան՝ աջակցելու խորհրդային կողմնորոշում ունեցող ուժերին: Սկսվեց աֆղանական պատերազմը (1979-1989 թթ.), որը դարձավ իսլամական ծայրահեղ արմատականության նոր միտումների դրսևորման և ծայրահեղ

արմատական գաղափարներով առաջնորդվող իսլամական նոր առաջնորդների ի հայտ գալու միջավայր:

1980-ական թթ. աֆղանական պատերազմում աչքի ընկավ պաղեստինցի Աբդալլահ Յուսուֆ Ազզամը, ով դրեց դասական ջիհադի ժամանակակից հայեցակարգի հիմքերն Աֆղանստանում[1]: Նա ջիհադի գաղափարախոսությունը համալրեց նոր տարրերով. այն բռնի ուժով իրականացվող ջիհադն էր առաջին հերթին մուսուլմանական երկիրը բռնազավթած «անհավատների» դեմ, որտեղ բացառվում էր վերջիններիս հետ բանակցությունների ու երկխոսության հնարավորությունը: Ըստ Աբդալլահ Ազզամի՝ խորհրդային զորքերի ներխուժումն Աֆղանստան աստվածային կանխորոշմամբ էր իրականացվել, և դավանաբանական դիմակայության իր կոչերով շտապեց Փեշավար, որպեսզի տեղի հավաքվող մոջահիդների շրջանում տարածի իր գաղափարները[2]:

Ազզամի կողմից առաջ քաշված տեսակետների համաձայն՝ խաղաղ պայմաններում անհրաժեշտ էր, որպեսզի մուսուլմանները կոչ հղեին ոչ մուսուլմանական երկրներին ընդունել իսլամ՝ դրա համար ստեղծելով նպաստավոր պայմաններ: Յուրաքանչյուր իսլամական պետության վրա պարտավորություն էր դրված մուջահիդների խումբ ուղարկել իր հարևան ոչ իսլամադավան պետություններ, որոնք պետք է ներկայացնեին իսլամն այդ պետությունների ղեկավարներին և ժողովուրդներին: Եթե վերջիններիս կողմից մերժվեր իսլամ ընդունելը, ապա նրանց պետք էր առաջարկել ջիզյա (գլխահարկ) վճարել, որով կստանային իսլամական պետության հովանավորությունը: Եթե նրանք սա էլ մերժեին, ապա նրանց նկատմամբ պետք էր իրականացնել ջիհադ, պնդում էր Ազզամը՝ նշելով, որ մուսուլմանական ումման գտնվում էր հուսալքված վիճակում, և

[1] Ազզամը ծնվել է 1941 թ. պաղեստինյան Ասբահ ալ-Հարթիյահ գյուղում և երիտասարդ տարիքից մասնակցել է Իսրայելի դեմ տարվող պայքարին: 1960-ական թթ. Ազզամը տեղափոխվեց Հորդանան, որից հետո փոխադրվեց Սաուդյան Արաբիա, որտեղ Ջիդդայի Աբդ Ալ-Ազիզի անվան համալսարանում ուսանելու տարիներին տոգորվեց ջիհադի գաղափարներով:

[2] Տե՛ս Kohlman E., Al-Qaida's Jihad in Europe: The Afghan-Bosnian Network, Oxford, New York, 2004, p.4-6.

այս տիպի ջիհադ իրականացնելուց առաջ այն պետք է բարոյապես պատրաստ լիներ դրան[3]:

Ըստ Ազզամի ջիհադն ընդդեմ անհավատների լինում է երկու տեսակի.

1. հարձակողական ջիհադ, որի ժամանակ անհավատների ռազմուժը չէր պատրաստվում հարձակվել մուսուլմանական հողերի վրա: Այդ ժամանակ պայքարն անհավատների դեմ դառնում էր «Կոլեկտիվ/Խմբային պարտականություն»՝ այդ պայքարին մուսուլմանների մասնակցության սահմանափակ պահանջներով և Ալլահի թշնամիներին ահաբեկելու նպատակով վերջիններիս դեմ տարին առնվազն մեկ անգամ մուսուլմանական բանակ ուղարկելով:
2. Պաշտպանական ջիհադ, որը վերածվում էր «Անհատական պարտականության» յուրաքանչյուր մուսուլմանի համար[4]:

Ազզամը հայտարարում էր, որ ոչ մուսուլմանական երկրի ներխուժումը մուսուլմանական երկիր պահանջում էր անհապաղ ռազմական միջամտություն, և արական սեռի բոլոր մուսուլմանները, ովքեր ունակ էին մարտեր վարելու, պետք է պաշտպանեին այդ մուսուլմանական երկիրը, աշխարհի որ մասում էլ որ լիներ[5]:

Ջիհադի հայեցակարգին առնչվող Ազզամի նորարարություններից էր նաև այն, որ ոչ միայն մուսուլմանական երկրների բնակչությունը, այլև աշխարհի բոլոր մուսուլմանները պետք է մասնակցեին մուսուլմանական երկրի վրա հարձակված երկրի դեմ պայքարին:

---

[3] Azzam A., Signs of ar-Rahman in the Jihad of Afghan, Maktabah Booksellers and Publishers, Birmingham-England, pp. 59-60.

[4] Իսլամական ավանդույթը տարբերակում է պարտականությունների երկու տեսակ՝ «Անհատական պարտականություն» (Al-Fard al-ʿIn-الفرض العين), որը ներառում է աղոթքը, ծոմը և այլն և «Կոլեկտիվ/Խմբային պարտականություն» (Al-Fard al-Kifāīa-الفرض الكفاية), որի բավարար քանակության մուսուլմանների իրականացման դեպքում մյուս անհատներն ազատվում են այն իրականացնելուց (օրինակ՝ հանգուցյալի համար աղոթքը, սրբազան պատերազմը և այլն) (տե՛ս The Encyclopaedia of Islam» Volume II. Leiden, E. J. Brill, The Netherlands, 1991, p. 790):

[5] Azzam A., Defense of the muslim lands: The first obligation after imam (տե՛ս www.kalamullah.com/Books/defence.pdf (մուտք՝ հոկտեմբերի 12, 2013 թ.).

Այդ ժամանակ արդեն կար դրա նախադեպը՝ Պաղեստինը, պաղեստինցիներին տրվող աջակցությունն ընդդեմ Իսրայելի և նրա արևմտյան դաշնակիցների: Պաղեստինի համար միջոցների հավաքագրման և դրա հետ կապված տեղեկատվության տարածման մարտավարության փորձը հետագայում օգտագործվեց այլ երկրներում՝ ջիհադի պայքարին աջակցություն ցուցաբերելու համար:

Ազզամը կարծում էր, որ երբ մուսուլմանական երկրները բռնազավթված են գաղութարարների կողմից, ապա ջիհադը վերածվում էր «Անհատական պարտականության» բոլոր մուսուլմանների համար: Սակայն նա հավելում էր, որ եթե այդ տարածքներում բնակվող մուսուլմանները քիչ են թվաքանակով կամ մարտունակ չեն, ապա այդ պարտականությունն ընկնում էր հարևան տարածքներում ապրող մուսուլմանների վրա, և այդպես շարունակ, մինչև որ այն («Անհատական պարտականությունը») տարածվի ամբողջ աշխարհով՝ ավելացնելով, որ «Անհատական պարտականության» համար մուսուլմանը կարիք չունի թույլտվության[6]:

Մշտական ջիհադը, ըստ Ազզամի, իսլամի բաղկացուցիչներից մեկն էր և միայն իսլամի ձևավորման ժամանակաշրջանին բնորոշ երևույթ չէր: Այն պետք է իրականացվեր նաև այսօր, սկսվեր գաղափարների ոլորտում՝ ներթափանցելով ճշմարտության, իրականության և փորձի բնագավառ: Ազզամը պնդում էր, որ երբ թշնամին մոտենում է «Իսլամի տանը» (Դար ալ-Իսլամ)[7], ապա անհրաժեշտ է, որ մուսուլմանները դուրս գան և պայքարեն թշնամու դեմ, մինչև իսլամի հողերի անվտանգության ապահովումն ու թշնամուն հաղթելը: Նրա կող-

[6] Տե՛ս ʿzām A., Bašāīr al-Naṣr, Bayrūt, 1992, էջ 78:

[7] «Դար ալ-Իսլամ»-ը (Dār al-Islām- دار الإسلام), ըստ մուսուլմանական ավանդույթի, դիտարկվում է որպես «Իսլամի տուն», որը ներառում է այն բոլոր երկրները, որտեղ գործում է իսլամական օրենքը՝ ենթադրելով հավատքի, օրենքի և ումմայի երաշխավորված անդամների միասնություն: Մուսուլմանական ավանդույթի դասական մեկնաբանությամբ «Դար ալ-Իսլամ»-ից դուրս ամեն ինչ «Դար ալ-Հարբ» է: Այնուամենայնիվ հայտնի են օրինակներ, երբ հարևան երկրների ղեկավարների հետ հաշտության կնքմամբ թույլատրվել է այդ երկրներին տուրք վճարելու դիմաց պահպանել ներքին ինքնավարությունը, որը դիտվել է մուսուլմանական պետության գերիշխանության պաշտոնական ճանաչում (տե՛ս The Encyclopedia of Islam, New Edition, Under the patronage of the international union of academies, Volume II, Leiden, E. J. Brill, 1991, p. 127):

մից կարևորվում էին նաև իսլամական աշխարհից դուրս մուսուլմանների իրականացրած արշավանքներն անհավատների դեմ: Այս առումով Ազզամը հիշեցնում էր, որ նման բազմաթիվ արշավանքներ են կազմակերպվել Մուհամմադ մարգարեի կողմից: Ազզամը կարևորում էր նաև իսլամի համար ամուր հիմքի ստեղծումը, որը պետք է կառուցվեր մուսուլմանական համայնքի կազմավորման ճանապարհով: Վերջինը պետք է իրականանար այնտեղ, որտեղ գոյություն ուներ ջիհադական պայքարի վրա հիմնված իսլամական շարժում[8]:

Լինելով «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության անդամ՝ Ազզամը դարձավ կապող օղակ այդ կազմակերպության և իսլամական արմատական այլ շրջանակների միջև: Ազզամը դարձավ ժամանակակից ջիհադի գլխավոր քարոզողը՝ հանրայնացնելով զինված պայքարի հայեցակարգը:

Մուսուլմանները միանշանակ չընդունեցին Ազզամի կողմից քարոզվող գաղափարները, քանի որ աստվածաբաններից շատերը կարծում էին, որ Աֆղանստանում իրականացվող ջիհադը աֆղանցիների «Անհատական պարտականությունն» է: Սակայն աֆղանական ջիհադին մասնակցելու զանգվածային բնույթը և մուջահիդների ռազմական հաջողություններն Ազզամի գաղափարների տարածման հիմքը դարձան:

Աբդալլահ Ազզամի կազմակերպչական ունակությունների և խարիզմատիկ կերպարի մասին լեգենդներ էին պտտվում մուջահիդների շրջանում: Ազզամը հավատարիմ էր իր սկզբունքներին՝ համարելով, որ կա՛մ Աֆղանստանում վարվող ջիհադական պայքարը կստացվեր, կա՛մ նա կդառնար շահիդ[9]: Մերձավոր Արևելքի երկրներից Աֆղանստան եկած ջիհադականների մարտական պատրաստվածությունը կազմակերպելու և նրանց գործունեությունը ղեկավարելու համար Աբդալլահ Ազզամը 1984 թ. ստեղծեց «Մուջահիդների սպասարկման/ծառայությունների բյուրո» (Maktab Ḫadamāt al-Muǧāhidīn- مكتب خدمات المجاهدين, որը հետագայում դարձավ «ալ-Կաիդա»-ի կազմավորման հիմքը):

Ըստ Աբդալլահ Ազզամի. «Ջիհադը մուսուլմանի պարտականությունն է, որը չի վերանա Աֆղանստանում հաղթանակի հետ, ջիհադը կմնա յուրաքանչյուր մուսուլմանի «Անհատական պարտականությունը», մինչև չվերադարձվեն բոլոր նախկին

[8] Տե՛ս ʿzām A., նշվ. աշխ., էջ 78:

[9] Տե՛ս Kohlman E., նշվ. աշխ., էջ 6:

մուսուլմանական հողերը, որպեսզի իսլամը նորից գերիշխի այնտեղ»[10]:

Քարոզների հետևանքով մեծ թվով մուջահիդներ տեղափոխվեցին Փեշավար, որպեսզի կարողանան անմիջապես մասնակից լինել դիմադրությանը և կոփվել իսլամիստների շրջանում: 1980-ական թթ. կեսին սաուդական հարուստ ընտանիքների երիտասարդների համար կազմակերպվում էին այցելություններ Աֆղանստան, որտեղ նրանք մի քանի շաբաթ անցկացնում էին մարտական ճամբարներում: Մի քանի շաբաթով Աֆղանստան էին ուղարկվում նաև իսլամական ակտիվիստներ մուսուլմանական և եվրոպական երկրներից, որոնք, վերադառնալով տուն ջիհադ վարելու փորձը յուրացրած, պատրաստ էին պայքարելու «անհավատ» իշխանությունների դեմ: Նրանցից ոմանք, իրենց երկրներում իշխանությունների կողմից հետապնդումների ենթարկվելով, սկսեցին հավաքվել Պակիստանի հյուսիսարևմտյան սահմանային Փեշավարի շրջանում[11], որը դարձավ այն վայրը, որտեղ սկսեցին կենտրոնանալ ամերիկյան զինամթերքն ու արաբական փողերը, հավաքվեցին մուսուլմաններ ամբողջ աշխարհից, ստեղծվեցին ռազմական ճամբարներ՝ ջիհադ իրականացնելու համար: Մուջահիդները միշտ կապի մեջ էին պակիստանյան և ամերիկյան հատուկ ծառայությունների, ինչպես նաև պակիստանյան իսլամական խմբավորումների, այդ թվում՝ «Ալ-Ջամա'ա ալ-Իսլամիա» խմբավորման և դեոբանդական դպրոցների ցանցի հետ: Սակայն այս իսլամական խմբավորումների միասնական շարժումն ու պայքարն ունեցան զարգացման իրենց տրամաբանությունը, որն արդեն 1990-ական թթ. սկսեց գործել ընդդեմ իր հեղինակների[12]:

Մինչ Աբդալլահ Ազզամը իսլամական արմատական հեղինակների կողմից առաջ քաշվող ջիհադական կարգախոսները զուրկ էին հավատացյալների կազմակերպված զանգվածից, որը դրանք կյանքի կկոչեին: Աֆղանական պատերազմի առաջին 5 տարիներին իսլամական առաջնորդները հիմնականում ֆինանսական և ռազմական օգնության բաշխման և կազմակերպչական գործառույթներով էին առանձնանում, այլ ոչ թե աչքի ընկնում որպես ռազմական առաջնորդներ: Իրավիճակը

[10] 'zām A., Bašāīr al-Naṣr, Bayrūt, 1992, էջ 78-79.

[11] Տե՛ս Кепель Ж., նշվ. աշխ., էջ 135-148:

[12] Նույն տեղում, էջ 136:

փոխվեց 1985 թ., երբ Աբդալլահ Ազզամը համաձայնության եկավ «Աֆղան մուջահիդների իսլամական միության» ղեկավար Աբդ Ալ-Ռաբ Ռասուլ Ալ-Սայյաֆի հետ, որը թույլ տվեց Աֆղանստանի Կունար նահանգում տեղակայված Սալման Ալ-Ֆարիսի ռազմական ճամբարը տրամադրել արաբ մուջահիդների ռազմական պատրաստության համար: Ազզամի ծրագիրը ռազմական ճամբարի հետ կապված ոչ միայն տարբեր վայրերից հավաքվող մուսուլման կամավորներին մարտավարական հնարքներին ծանոթացնելն էր, այլ նաև ջիհադականների շրջանում դավանաբանական միասնության քարոզն էր՝ արմատախիլ անելով նրանց մեջ էթնո-դավանական տարաձայնությունները:

Ազզամի կողմից քարոզվող ջիհադը գործնական կիրառում էր ստանում, որտեղ շեշտվում էր ինչպես Աֆղանստանում, այնպես էլ Պաղեստինում բռնազավթիչների և անհավատների (ըստ Ազզամի) դեմ պայքարելու յուրաքանչյուր մուսուլմանի պարտականության կարևորությունը:

Որոշ արաբ երիտասարդների համար Աֆղանստանը դարձավ այն ռազմադաշտը, որտեղ անհրաժեշտ էր ջիհադ իրականացնել: Այդ երիտասարդ ջիհադականների ռազմական գործողությունների սահմանափակ փորձն ու վերջիններիս կողք կողքի պայքարը համախմբում էին նրանց՝ հավատացած լինելով, որ իրենք Աֆղանստանում նահատակներ կդառնան հանուն Աստծո մղվող պայքարում, և մոտ է նրանց դրախտում հայտնվելու ժամանակը[13]: 1980-ական թթ. վերջերին, երբ մոտենում էր աֆղանական պատերազմի ավարտը, Աբդալլահ Ազզամը դիմեց իր հետևորդներին. «Եղբայրնե՛ր, Աֆղանստանից հետո աշխարհում մեզ համար այլևս ոչինչ անհնարին չկա: Չկան գերտերություններ ու փոքր տերություններ: Կարևորը այն կամքի ուժն է, որը բխում է մեր հավատքից»[14]: Ըստ Ազզամի՝ աֆղանական պատերազմն իսկական փորձություն էր առաջնագծում կռվող մուսուլմանների համար, որոնց նպատակն էր ամեն գնով Աֆղանստանում իսլամական կրոն հաստատելը: Միայն շարունակական պայքարը կապահովեր մուսուլմանների միավորիչ ուժգնությունն ընդդեմ հավանական

[13] Տե՛ս Kohlman E., նշվ. աշխ., էջ 7-8:

[14] Emerson S., Jihad in America. SAE Productions (for PBS): Washington DC. Originally aired 21 November 1994.

հակառակորդի: Մուսուլմանները պետք է շարունակեին ջիհադը մինչև վերջ՝ հասնելով իսլամական պետության կերտման[15]:

Այսպիսով, XX դարի 80-ական թթ. իսլամական արմատական գաղափարախոսության մեջ Աբդալլահ Ազզամի կողմից առաջ քաշված ջիհադի հայեցակարգային նոր հիմնադրույթների ու գաղափարների ընդհանրական պատկերը հետևյալն է.

1. ոչ մուսուլմանական երկրի կողմից մուսուլմանական երկիր ներխուժումն անհապաղ ռազմական միջամտություն էր պահանջում: Բոլոր արական սեռի մուսուլմանները, ովքեր ունակ էին մասնակցելու ռազմական գործողությունների, պետք է պաշտպանեին բռնազավթված մուսուլմանական երկիրը, աշխարհի որ մասում էլ որ լինեին:
2. Մուսուլմանական երկրում բռնազավթողների դեմ պայքարը մուսուլմանի «Անհատական պարտականությունն» էր, որի համար վերջինս կարիք չուներ թույլտվության:
3. Ջիհադը պետք է մշտական բնույթ կրեր, այսինքն՝ լիներ շարունակական, և այն պետք է ընթանար նաև գաղափարական տիրույթում:
4. Ազզամը կարևորում էր նաև իսլամական աշխարհից դուրս մուսուլմանների կողմից անհավատների դեմ իրականացվող պայքարը:
5. Պայքարի նպատակը Իսլամական պետության հիմնումն է[16]:

Աբդալլահ Ազզամի ջիհադի հայեցակարգային հիմնադրույթների ազդեցությունն իսլամական ծայրահեղ արմատականության արդի միտումների վրա

1980-90-ական թթ. ջիհադական շարժման հաջողության գլխավոր գործոնը Աբդալլահ Ազզամի բավական հստակ ձևակերպված և իսլամական արմատականների շրջանում լայն տարածում ստացած գաղափարախոսությունը եղավ, որը հատկապես դրսևորվեց 2001 թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ի դեմ իրականացված և ընդհանրապես 2000-ական թթ. կեսերին իսլամական ծայրահեղականների կողմից իրականացված ահաբեկ-

[15] ʿzām A., Al-Qāʿda. Al-Ǧihād, 1988, 41, ʾabrīl, էջ 46.

[16] Աբդալլահ Ազզամն իր երկու որդիների հետ սպանվեց պայթյունի հետևանքով Փեշավարում 1989թ. նոյեմբերի 24-ին:

չական գործողություններում, ինչպես նաև 2010 թ. վերջին մուսուլմանական երկրներում, մասնավորապես Մերձավոր Արևելքում ծայր առած ցնցումների, հեղափոխությունների և փոփոխությունների ժամանակ:

Ինչպես Աֆղանստանը 1980-ական թթ., այնպես էլ Մերձավորարևելյան տարածաշրջանը (մասնավորապես Իրաքը) 2000-ական թթ. կեսերից դարձան իսլամական ծայրահեղ արմատականների կողմից վարվող ջիհադական պայքարի առարկայական դրսևորումների նոր հարթակ:

Իրաքում ջիհադական պայքարը խոր արմատներ գցեց 2003 թ. հետո, երբ Սադամ Հուսեյնի վարչակարգը տապալվեց, իշխանությունն անցավ շիաներին, և Իրաքում հայտնվեցին արևմտյան կոալիցիոն ուժեր: Ազգամի կողմից առաջ քաշված գաղափարներն իրենց մեծ ազդեցությունն ունեցան հետսադամյան Իրաքում: Այդ գաղափարների անմիջական ազդեցության տակ դեպի Իրաք շարժվեցին մեծաթիվ իսլամականներ, որոնք Իրաքում անմիջապես անցան ջիհադական պայքարի արևմտյան և շիական ուժերի դեմ:

Ճիշտ է, Իրաքում իշխանության եկած շիաները կարողացան նաև արևմտյան զինուժի աջակցության և Իրաքի սուննի ցեղերի համախմբման շնորհիվ ճնշել գլուխ բարձրացնող իսլամական ծայրահեղ արմատական միտումները, սակայն այն արմատախիլ անել չհաջողվեց:

2010 թ. վերջից Թունիսում սկսված հասարակական-քաղաքական ցնցումների ալիքը հասավ նաև մուսուլմանական այլ երկրներ, մասնավորապես Սիրիա և Իրաք, որտեղ աստիճանաբար ակտիվացող իսլամական ծայրահեղ արմատական դրսևորումներում նույնպես նկատելի դարձավ Ազգամի գաղափարների ազդեցությունը:

Սիրիական հակամարտությունն իր սկզբնավորման ժամանակահատվածից (2011 թ. մարտ) ուներ առավելապես սոցիալական բնույթ, որը հետագայում ընդունեց սուր քաղաքական ուղղվածություն՝ երկիրը կանգնեցնելով խոր ճգնաժամի առջև: Աստիճանաբար ակնառու դարձան Սիրիայում ներգրավված հակամարտող կողմերը՝ ներկայիս իշխանություններն ու հիմնականում դրսից (Պարսից ծոցի արաբական միապետություններ, Թուրքիա, Հորդանան և այլն) կազմակերպվող ու ֆինանսավորվող ընդդիմադիր զանգվածը, որը սկզբնական շրջանում ներկայացված էր առավելապես աշխարհիկ ուժերով, թեպետ նրանց շարքերում նկատվում էին նաև որոշ իսլամա-

կան խմբավորումներ: 2012 թ. ընթացքում Սիրիայում ընդդիմադիր աշխարհիկ խմբավորումների հետ զուգահեռ սկսեցին ակտիվություն ցուցաբերել իսլամական արմատական, նաև ծայրահեղ արմատական ուժերը:

Սիրիական հակամարտության սկզբից նկատվեց երկրում ավանդապես ազդեցիկ դիրքեր ունեցող «Մուսուլման եղբայրներ» իսլամական արմատական խմբավորման ակտիվ ներգրավվածությունը: Դրան զուգահեռ Սիրիայում գլուխ բարձրացրին նաև իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումներ, որոնց շարքում աչքի ընկան «Հաղթանակի ճակատ» (جبهة النصرة-Ջաբհաթ ալ-Նուսրա), «Իսլամական Շամի ազատների շարժում» (حركة أحرار الشام الإسلامية-Ահրար աշ-Շամ), «Միաստվածության խմբավորում» (لواء التوحيد-Լիուա աթ-Թաուհիդ), «Իրաքում և Շամում իսլամական պետություն» (الدولة الإسلامية في العراق والشام-Դաուլա ալ-Իսլամիա ֆի ալ-Իրաք ուա ալ-Շամ) և այլ խմբավորումներ:

Մերձավոր Արևելքում ծավալված ջիհադն ուղեկցվեց ինչպես մուսուլմանական երկրներում, այնպես էլ աշխարհի տարբեր հատվածներում բնակվող մուսուլմանների շրջանում լայն քարոզչությամբ: Սիրիայում, հետագայում նաև Իրաքում ջիհադը գրավիչ դարձնելու նպատակով իսլամական ծայրահեղ արմատականության գաղափարախոսների կողմից օգտագործվեցին ժամանակակից տեխնոլոգիաներ (IT մասնագետներ, համացանց, բարձր որակի գովազդային տեսահոլովակներ և այլն):

Այսօր էլ Մերձավոր Արևելքում շարունակվող հակամարտություններում նկատելի են Աբդալլահ Ազզամի ժամանակակից ջիհադական պայքարի հանրայնացման մարտավարությունը, առաջ քաշված գաղափարների ազդեցությունն ու կիրարկման լայն հնարավորությունները: Աշխարհի տարբեր հատվածներում բնակվող երիտասարդ մուսուլմանների համար իսլամական խալիֆայության, մուսուլմանական ումմայի շենացման, ջիհադական պայքար իրականացնելու, «անհավատների» դեմ պայքարելու և իսլամական արմատական այլ գաղափարներ կյանքի կոչելու հնարավորություն է ստեղծվել հատկապես Սիրիայում և Իրաքում: Ազզամի կողմից առաջ քաշված մուսուլմանական երկրում բռնազավթողների դեմ պայքար վարելու գաղափարը վերածվել է մուսուլմանի «Անհատական պարտականության», որով օժտված իսլամականներն աշխարհի տարբեր հատվածներից շարունակում են գալ և

մասնակից դառնալ իսլամական երկրներում ընթացող ջիհադին: Աբդալլահ Ազզամի՝ ջիհադական պայքարի նպատակներից մեկը՝ Իսլամական պետություն ստեղծելը, իր առարկայական դրսևորումն է գտնում իսլամականների կողմից վերահսկվող Սիրիայի և Իրաքի ներկայիս զգալի տարածքներում:

Այսպիսով, 1980-ական թթ. ջիհադի հայեցակարգը Աբդալլահ Ազզամի շնորհիվ հարստացավ նոր գաղափարներով, որոնք լայն տարածում գտան ինչպես XX դարի վերջին, այնպես էլ XXI դարի սկզբին և՛ մուսուլմանական աշխարհում, և՛ դրանից դուրս: XXI դարի առաջին տասնամյակի սկզբում մուսուլմանական երկրներում տեղ գտած փոփոխությունների և աշխարհաքաղաքական նոր իրողությունների համատեքստում ջիհադի հայեցակարգի տեսական և գործնական կիրարկումների հիմքում տեսանելի դարձան Աբդալլահ Ազզամի կողմից առաջ քաշված ու մուսուլմանական ծայրահեղ արմատական տիրույթում լայն տարածում ստացած նոր մոտեցումները, որոնց անկյունաքարային հիմնադրույթներից մեկը՝ Իսլամական պետության հիմնումը, դարձավ իրողություն 2014 թ. Հունիսի 29-ին Սիրիայի և Իրաքի զգալի տարածքների վրա: